

**ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ  
Արդի միջազգային-իրավական համակարգում\***

**Բանալի բառեր** – ոչ նյութական մշակութային ժառանգություն, էթնոմշակութային զտում, մշակութային իրավունքներ, մշակույթը պատերազմի ժամանակ, ադրբեջանական ագրեսիա, հայ ինքնության ոչնչացում, միջազգային հումանիտար իրավունք, պատերազմի սովորության օրենքներ:

**Մուտք**

Էթնոմշակութային և կրոնական խտրականությունը ժամանակակից պատերազմների առաջացրած հիմնական խնդիրներից է<sup>1</sup>, որի գոյությամբ համայնքները խոցելի են դառնում ոչ միայն ֆիզիկապես, այլև մշակութային ինքնությամբ<sup>2</sup>:

Մշակութային ժառանգության դեմ կանխամտածված հարձակումներով են ընթանում էթնիկ զտումների և ինքնության հետ կապված պատերազմները<sup>3</sup>, որոնցից էր 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմը Արցախի դեմ: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանն իր ձևավորումից ի վեր (1918 թ.) վարել է հակահայ պետական քաղաքականություն, որի հիմքում եղել և շարունակում է մնալ հայ ինքնության և մշակութային արժեքների ոչնչացումը<sup>4</sup>: Քաջ գիտակցելով, որ մշակութային ժա-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 02.03.2021:

1 **Stéphan Brosché J., Legnér M., Kreutz J. and Ijla A.**, Heritage under Attack Motives for Targeting Cultural Property during Armed Conflict, “International Journal of Heritage Studies”, 2016, N 23, էջ 1-26:

2 **Stéphan Johannot-Gradis Ch.**, Protecting the past for the future: How does law protect tangible and intangible cultural heritage in armed conflict?, “International Review of the Red Cross”, 2015, N 97 (900), էջ 1253–1275:

3 **Stéphan Bevan R.**, The Destruction of Memory. Architecture at War, London, Reaktion Books., 2006, էջ 229:

4 Ադրբեջանական հակահայկականությունը սկիզբ է առել Թուրքիայի ծայրահեղ-ազգայնական քաղաքականության ազդեցությամբ սկսած 1918 թ. Ադրբեջանի՝ որպես պետության ձևավորումից և 1930-ական թթ. «ադրբեջանցի ժողովուրդ» հասկացությունը շրջանառության մեջ դնելուց: Այն ինտենսիվորեն զարգացել է խորհրդային ժամանակաշրջանում (հատկապես սկսած 1960-ականներից) և մինչ օրս շարունակվում է:

ռանգությունն ուժգնորեն ազդում է ինքնության զգացողության, հավաքական պատասխանատվության, հիշողության ձևավորման, հասարակական պահվածքի, պատկերացումների և բնավորության վրա<sup>5</sup>, նվաճող պետությունը ձգտում է խարխլելու Արցախի ժողովրդի սոցիալական միասնությունը և ի վերջո նրա բնակչությանը հասցնելու դիսֆունկցիոնալության<sup>6</sup>:

Պատերազմը բնորոշվեց Արցախի ոչ միայն նյութական, այլև ոչ նյութական ժառանգության ակնհայտ թիրախավորմամբ որի հետևանքով նշյալ ոլորտը հսկայական վնասներ կրեց: Ընդգծենք նաև, որ հենց ոչ նյութական մշակութային ժառանգության ազդեցությամբ է պահպանվում հավաքական ինքնության և շարունակականության զգացումը<sup>7</sup>:

Բացի դրանից՝ նշենք նաև, որ մշակութային ժառանգության գլխավոր գործառույթը սոցիալական համախմբումն է՝ որպես համայնքի զարգացման և ինքնության հաստատման գործոն, որի պատասխանատուն հիմնականում ոչ նյութական ժառանգությունն է<sup>8</sup>: Ուստի վերջինիս պաշտպանությունը բախումների ժամանակ էլ ավելի կարևոր է դառնում ոչ միայն բուն ժառանգության՝ որպես առանձին միավորի, այլև այն կրող համայնքների և խմբերի էթնոմշակութային ինքնության պահպանման տեսանկյունից: Այս դեպքում ոչ նյութական մշակութային ժառանգությունը փխրուն, բայց կարևոր գործոն է թե՛ մշակութային ինքնարտահայտման և թե՛ գիտելիքների ու հմտությունների սերնդեսերունդ փոխանցման առումով: Ոչ նյութական մշակութային ժառանգությունը ներառում է սովորույթները, բեմադրությունները, արտահայտությունները, գիտելիքն ու հմտությունները, ինչպես նաև դրանց հետ կապված գործիքներ՝ առարկաներ, արվեստի գործեր և մշակութային այն տարածքները, որոնք համայնքների, խմբերի և, որոշ դեպքերում, անհատների կողմից ճանաչվում են որպես իրենց մշակութային ժառանգության մաս<sup>9</sup>: Ոչ նյութական ժառանգության տարրերից են՝ **ավանդություններն ու արտահայտությունները, որոնց թվում՝ լեզուն, կատարողական արվեստները, սոցիալական սովորույթները, ծեսերը, տոնակատարությունները, ավանդական արհեստները** և այլն:

Պատերազմի հենց առաջին օրվանից Ադրբեյջանը, որդեգրելով էթնիկ գտման քաղաքականություն, բռնի տեղահանեց Արցախի մի շարք հա-

5 Տե՛ս Buckland M., Cultural Heritage (Patrimony): An Introduction. Zadar, Croatia., 2013, էջ 11-25 in: Records, Archives and Memory, [https://escholarship.org/content/qt2sh1r7t2/qt2sh1r7t2\\_noSplash\\_f146a887518aa77227a72bfe59fed610.pdf?i=oe2h8f](https://escholarship.org/content/qt2sh1r7t2/qt2sh1r7t2_noSplash_f146a887518aa77227a72bfe59fed610.pdf?i=oe2h8f), (մուտք 01.02.2021):

6 Տե՛ս Stone, P. G., "The Challenge of Protecting Heritage in Times of Armed Conflict." Museum International 67:1-4, 2016, DOI: 10.1111/muse.12079, էջ 40-54:

7 Տե՛ս UNESCO Executive Board, Report on the Preliminary Study on the Advisability of Regulating Internationally, Through a New Standard-Setting Instrument, the Protection of Traditional Culture and Folklore, 2001, 16 May, UNESCO Doc. 161 EX/15, Annex, p. 3; UNESCO Intergovernmental Committee for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Decision 11.COM 15, 31 October 2016, para. 6.

8 Տե՛ս Bélaival Ph., The Benefits of Cultural Heritage for Society and its Main Challenges in a European Context, Cultural Heritage, A Resource for Europe. The benefits of interaction, 2011, էջ 23:

9 Տե՛ս ՅՈՒՆԵՍԿՕ-յի «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» կոնվենցիա, 2003, 2-րդ հոդված:

մայրքներ՝ զրկելով վերջիններիս մշակութային իրավունքներից, որը կարող է հանգեցնել նաև ամբողջական մշակութային համայնքներ կորցնելուն: Հիմք ընդունելով մասնագետների այն պնդումը, որ ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկացած պրակտիկա կարող է վերանալ, եթե սոցիալ-մշակութային արժեքները տարանջատվեն դրանցով զբաղվող համայնքների ու խմբերի կյանքից և գործելակերպից, այժմ, ավելի քան երբևէ, պետք է կարևորենք պատերազմի հետևանքով տեղահանված արցախահայության ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության հնարավոր մեխանիզմների որոնումը<sup>10</sup> :

Պատերազմների ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության հիմնական օրենքները Հաագայի և ժնևի կոնվենցիաներն են՝ իրենց համապատասխան արձանագրություններով<sup>11</sup>: Սակայն պետք է ընդգծել, որ այս իրավական մեխանիզմները պաշտպանություն են տրամադրում հիմնականում նյութական օբյեկտներին<sup>12</sup>, իսկ ոչ նյութական ժառանգության պաշտպանությունը շատ դեպքերում խնդրահարույց է: Բայց մշակութային ժառանգությունը միայն նյութական օբյեկտներով չի սահմանափակվում. այն նյութականի և ոչ նյութականի սերտորեն փոխկապակցված ամբողջություն է, և պատահական չէ, որ պատերազմների ժամանակ ժառանգության մի բաղադրիչի վրա հարձակումները նույն ավերիչ ուժով կարող են ազդել նաև նյութի վրա<sup>13</sup>: Ու եթե նյութականի դեպքում թիրախավորվում են մշակութային կառույցները, կոթողները, ապա ոչ նյութականի դեպքում՝ այդ ժառանգությունը կրող կամ մեկնաբանող անհատներն ու համայնքները, ինչպես նաև ոչ նյութական մշակութային ժառանգության տարրերը: Փաստորեն, ոչ նյութական մշակութային ժառանգությունը պատերազմների ժամանակ ամենախոցելիին է. այն վնասվում է բոլոր՝ նյութական և ոչ նյութական տարրերի վնասվելու, այդ ժառանգությունը կրող համայնքի անդամների (մարդկանց) թիրախավորվելու կամ տեղահանվելու դեպքերում: Ուստի այն լուծումները, որոնք իրավական համակարգով նախատեսված են պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության ամբողջական պաշտպանության համար, նյութակա-նից զատ՝ պետք է ներառեն նաև այլ տարրեր<sup>14</sup>:

### **Հողվածով նպատակ ունենք ներկայացնելու պատերազմի ժամանակ Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության իրավական**

10 Պաշտպանությունը նշանակում է ոչ նյութական մշակութային ժառանգության կենսունակության ապահովմանն ուղղված միջոցներ:

11 1993 թ. սեպտեմբերի 5-ից ՀՀ-ն Հաագայի 1954 թ. կոնվենցիայի և վերջինիս առաջին արձանագրության անդամ է (Ադրբեջանը՝ 1993 թ. սեպտեմբերի 20-ից), 2006 թ. մայիսի 18-ից Հաագայի 1999 թ. երկրորդ արձանագրության անդամ է (Ադրբեջանը՝ 2001 թ. ապրիլի 4-ից), 1993 թ. հունիսի 7-ից ՀՀ-ն և Ադրբեջանը կոնվենցիայի և երկու լրացուցիչ արձանագրությունների անդամ են :

12 Տե՛ս **Chainoglou K.**, The Protection of Intangible Cultural Heritage in Armed Conflict: Dissolving the Boundaries Between the Existing Legal Regimes, *Santander Art and Culture Law Review*, N 2, 2017, էջ 109-134:

13 Տե՛ս United Nations General Assembly, Report of the Special Rapporteur..., A/HRC/31/59, para. 77.

14 Տե՛ս **Johannot-Gradis Ch.**, Protecting the past.... էջ 1253-1275:

պաշտպանության անհրաժեշտությունը, ցույց տալու, որ զինված հակամարտության ժամանակ միջազգային կոնվենցիաներն ու այլ իրավական համակարգերը միայն մասամբ և անուղղակիորեն են պաշտպանում ոչ նյութական մշակութային ժառանգությունը, բացահայտելու այն խաչմերուկը, որտեղ վերոնշյալ ժառանգությունը դառնում է համայնքի անդամների մշակութային իրավունք, ուստիև մարդու իրավունքների միջազգային համակարգում պաշտպանության անհրաժեշտություն ունի:

## 1. Պատերազմի ժամանակ ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունը՝ ըստ միջազգային օրենքների

Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության որոշ կետեր է պարունակում Հաագայի «Զինված հակամարտության ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության» կոնվենցիան: Մասնավորապես 1899 թ. Հաագայի «Խաղաղության համաժողովում» ընդունված «Ցամաքում պատերազմի օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիան ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությանն անդրադարձավ՝ թերևս միայն կոչ անելով միջազգային հանրությանը հետապնդելու ժառանգության դեմ վանդալիզմի կամ գողության դրսևորումները, որոնք կարող են առնչվել ոչ նյութական ժառանգության արտեֆակտերին կամ գործիքներին<sup>15</sup>: Իսկ Հաագայի 1907 թ. հոկտեմբերի 18-ի կոնվենցիային կից կանոնակարգի 27-րդ հոդվածում ոչ նյութական տարրն առկա է միայն նյութականի հետ ենթադրվելիք միասնության տեսանկյունից. «Պաշարունների և ռմբակոծությունների ժամանակ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ քայլերը՝ հնարավորինս խնայելու կրոնին, արվեստին, գիտությանը կամ բարեգործական նպատակներին նվիրված շենքերը, պատմական հուշարձանները, եթե դրանք չեն օգտագործվում ռազմական գործողություններում առավելության հասնելու նպատակով»: Տվյալ կանոնի տրամաբանությամբ պահպանվում է ոչ միայն հուշարձանը, այլև այնտեղ իրականացվող գործողություններն ու փոխանցվող գիտելիքը»: Կանոնակարգի 56-րդ հոդվածը պահպանվող ժառանգության շարքին ավելացնում է կրթական հաստատությունները և արգելում բռնագրավումները<sup>16</sup>: Իսկ վերոնշյալ կանոնակարգի 46-րդ հոդվածը սահմանում է. «Ընտանեկան

15 St' u International Peace Conference, Convention (II) with Respect to the Laws and Customs of War on Land and its annex: Regulations concerning the Laws and Customs of War on Land, 1899, էջ 1-3.

16 St' u Laws And Customs Of War On Land (Hague, Iv), 1907, հոդված 56:

պատիվն ու իրավունքները, անձանց կյանքն ու ունեցվածքը, ինչպես նաև կրոնական համոզմունքներն ու գործելակերպը պետք է հարգվեն»<sup>17</sup>: Սա կարծես թե այն առաջին ու ամբողջական մեկնաբանությունն էր, որը քաղաքացիական անձանց պաշտպանության տիրույթում թերևս կարևորեց մարդկանց գործելակերպն ու համոզմունքները, և վստահաբար կարող է տարածվել ոչ նյութական մշակութային ժառանգությունը կրող անհատների ու խմբերի վրա:

Միջազգային հանրությունը 20-րդ դարի երկրորդ կեսին համաշխարհային պատերազմների հետևանքով մշակութային արժեքների ոչնչացման ահագնացմանն ի պատասխան ձեռնամուխ եղավ մի քանի նոր կանոնակարգերի ընդունմանը՝ մշակութային ժառանգության պաշտպանության հիմքում դնելով նրա՝ **ողջ մարդկությանը պատկանելու գաղափարախոսությունը**: 1954 թ. ընդունվեցին «Ջինված հակամարտության ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության կոնվենցիա»-ն<sup>18</sup> և առաջին արձանագրությունը, իսկ 1999-ին ընդունվեց նույն կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը: Բայց պետք է ասել, որ նոր կոնվենցիաներն ու արձանագրությունները կարող էին պաշտպանել միայն այն արժեքները, որոնք համընկնում են «մշակութային արժեք»-ի հետևյալ սահմանմանը. «Մշակութային արժեքը, անկախ ծագումից, յուրաքանչյուր պետության մշակութային ժառանգության համար մեծ նշանակություն ունեցող շարժական կամ անշարժ ժառանգությունն է, ինչպիսիք են՝ ճարտարապետության, արվեստի կամ պատմության հուշարձանները՝ անկախ իրենց կրոնական կամ աշխարհիկ բնույթից, ինչպես նաև հնագիտական վայրերը, կառույցների խմբերը, որոնք պատմական կամ գեղարվեստական հետաքրքրություն են ներկայացնում, արվեստի գործեր՝ ձեռագրեր, գրքեր և գեղարվեստական, պատմական կամ հնագիտական հետաքրքրություն ներկայացնող առարկաներ, գիտական հավաքածուներ և գրքերի ու արխիվների կամ վերոհիշյալ ժառանգության վերարտադրությունների կարևոր հավաքածուներ, կառույցներ, որոնց հիմնական և արդյունավետ նպատակը շարժական մշակութային արժեքների պահպանումն ու ցուցադրումն է, ինչպիսիք են՝ թանգարանները, արխիվները, գրադարանները և պահոցները, ինչպես նաև ապաստարանները, որոնք նախատեսված են զինված բախումների դեպքում մշակութային արժեքները պահպանելու համար»<sup>19</sup>: Այս կոնվենցիայով փաստորեն պաշտպանվում են միայն պետության կողմից սահմանված ազգային նշանակություն ունեցող արժեքները: Բայց ոչ նյութա-

17 Laws And Customs Of War On Land (Hague, Iv) 1907, <https://www.loc.gov/law/help/us-treaties/bevans/m-ust000001-0631.pdf>, (մուտք 01.02.2021).

18 Intergovernmental Conference on the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, 1954:

19 Protect cultural property in the event of armed conflict, The 1954 Hague Convention And Its Two Protocols, United Nations Educational, Scientific and Cultural Organization, 2005, էջ 1-2.

կան արժեքները սահմանվում են անհատապես կամ համայնքի կողմից և, ըստ այդմ, «կախված չեն մարդկության համար դրա համընդհանուր նշանակությունից, այլ վերաբերում են առանձին համայնքների համար դրանց նշանակությանը»<sup>20</sup>: Այս համատեքստում ոչ նյութական մշակութային ժառանգության սեփականատերերը հենց համայնքներն են, խմբերը և անհատները ի տարբերություն նյութական ժառանգության «բացառիկ համընդհանուր արժեքի»<sup>21</sup>: Ուստի կարևոր է հասկանալ, որ ոչ նյութական ժառանգությունը որևէ աղերս չի կարող ունենալ Հաագայի 1954 թ. «Ձինված հականարտության ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության» կոնվենցիայի «մշակութային արժեք»-ի սահմանման հետ: Եվ տվյալ հարցի շուրջ վերլուծաբանների գերակշռող տեսակետն այն է, որ Հաագայի կոնվենցիաները չեն կարող ապահովել ոչ նյութական մշակութային ժառանգության լիարժեք պաշտպանությունը<sup>22</sup> կամ կարող են պաշտպանել միայն այնքան, որքան նյութական ժառանգության պաշտպանությունը կտարածվի ոչ նյութականի վրա<sup>23</sup>:

Պատերազմների ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված կետեր կան նաև Ժնևի կոնվենցիայում և կից արձանագրություններում, որոնք կրկին անուղղակիորեն են անդրադառնում համայնական ժառանգության կամ ժառանգության համայնքների<sup>24</sup> պաշտպանությանը՝ այն դիտարկելով լոկ որպես քաղաքացիական անձանց պաշտպանության ոլորտ: Հարկ է ընդգծել, որ Ժնևի 1949 թ. «Պատերազմի գոհեղի և քաղաքացիական անձանց պաշտպանության» կոնվենցիայի առաջին արձանագրության 51-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ քաղաքացիական բնակչությունը չպետք է հարձակումների օբյեկտ հանդիսանա<sup>25</sup>: Բացի դրանից՝ առաջին արձանագրության 75-րդ հոդվածում նշվում է. «Պատերազմի ընթացքում անձինք չպետք է ստանան ռասայի, մաշկի, սեռի, լեզվի, կրոնի կամ դավանանքի, համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ծննդի կամ այլ կարգավիճակով պայմանավորված խտրական վերաբերմունք. անհրաժեշտ է հարգանքով վերաբերվել նաև նրանց պատվին, համոզմունքներին և կրոնական ծիսակատարություննե-

20 Ֆարոյի կոնվենցիայի համաձայն «ժառանգությունը կրող համայնքը բաղկացած է այն մարդկանցից, որոնք արժևորում են մշակութային ժառանգության՝ իրենց նայելու տրամ կողմերը՝ հանրային գործունեության շրջանակներում պահպանելու և ապագա սերունդներին փոխանցելու նպատակով»:

21 Chainoglou K., The Protection of Intangible Cultural Heritage in Armed Conflict, էջ 109-134:

22 Տե՛ս **Johannot-Gradis C.**, “Protecting the Past...”, էջ 1256:

23 Տե՛ս **Blake J.**, Developing a New Standard-setting Instrument for Safeguarding Intangible Cultural Heritage – Elements for Consideration, UNESCO, Paris, 2001, էջ 83:

24 Տե՛ս «Մշակութային ժառանգության նշանակությունը հասարակության համար» կոնվենցիա, հոդված 1ա, 2ա, 4գ, 5ա:

25 Տե՛ս «Աղբբեջանի կատարած իրավախախտումները ԼՂՀ-ում և միջազգային կառույցներին դիմելու հնարավորությունները», Ջեկույց, Եր., 2016, մայիս, էջ 13:

րին»<sup>26</sup>: Իսկ Ժնևի կոնվենցիայի 27-րդ հոդվածը հավելում է. «Բացի անհատի պատվի, ընտանեկան իրավունքի, կրոնական համոզմունքների և ծիսակատարությունների հանդեպ հարգանքից՝ անհրաժեշտ է հարգանք նաև «կենսափորձի և սովորույթների նկատմամբ»<sup>27</sup>, որը կարող է ընդգրկել ոչ նյութական ժառանգության ողջ տիրույթը, ներառյալ գիտելիքն ու հմտությունները:

Առաջին արձանագրության 85-րդ հոդվածի 4-րդ կետն արգելում է «Ժողովուրդների մշակութային կամ հոգևոր ժառանգություն համարվող, իրավասու միջազգային կազմակերպության շրջանակներում հատուկ պաշտպանություն ստացած պատմական հուշարձանների, արվեստի գործերի կամ երկրպագության վայրերի թիրախավորումը»<sup>28</sup>: Թեև այս կետը կրկին նյութականին է վերաբերում, բայց շատ գիտնականներ կողմ են այն տեսակետին<sup>29</sup>, որ ոչ նյութական մշակութային ժառանգության ընդգրկումը 2003 թվականի կոնվենցիայով սահմանված ցուցակներում բավարարում է այս պահանջներին և փաստացի հատուկ պաշտպանություն առաջարկում նաև ոչ նյութական այն տարրերին, որոնք կան ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցուցակներում<sup>30</sup>:

Ինչպես վերը փաստարկվեց, ոչ նյութական մշակութային ժառանգությունը կյանքի է կոչվում այն կրողների կողմից իրացման միջոցով<sup>31</sup>: Եվ կարևոր է փաստել, որ Ժնևի կոնվենցիայի առաջին արձանագրության 15-րդ հոդվածի 5-րդ կետը<sup>32</sup> և երկրորդ արձանագրության 9-րդ հոդվածի<sup>33</sup> ձևակերպումները այդ ժառանգությունը կրող հոգևոր առաջնորդների և կրոնի սպասավորների պաշտպանության մասին կետ ունեն: Բայց պատերազմի ընթացքում Ադրբեյջանի կողմից սույն դրությի մասով միջազգային իրավունքի կոպիտ խախտումներ են եղել, քանզի երբ երկու անգամ ռմբակոծվեց Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին, հոգևորականները եկեղեցում էին, մինչդեռ որպես այդ ժառանգությունը կրող անհատ-

26 Ժնևի 1949 թ. օգոստոսի 12-ի «Միջազգային զինված կոնֆլիկտների ժամանակ զոհերի պաշտպանության վերաբերյալ» կոնվենցիային կից 1977 թ. լրացուցիչ արձանագրություն, հոդված 75:

27 Տե՛ս նշվ. կոնվենցիա, հոդված 27:

28 Ժնևի 1977 թ. լրացուցիչ արձանագրություն, հոդված 85, 4/դ կետ:

29 Տե՛ս **Vrdoljak A. F.**, Cultural Heritage in Human Rights and Humanitarian Law, in: O. Ben-Naftali (ed.), International Humanitarian Law and International Human Rights Law, Oxford, Oxford University Press, 2011, էջ 259:

30 Այս խումբ կարող են մտնել Հայաստանից ներկայացված մի քանի ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքներ (Արցախը կողմ չէ կոնվենցիային և չի կարող արժեքներ առաջադրել), որոնք են՝ «Ղուղուկը և իր երաժշտությունը», «Սասունցի Ղավիթ էպոսը», «Լավաշը՝ որպես ավանդական հաց Հայաստանում. պատրաստումը, մշակությունը», «Քոչարին՝ որպես ավանդական խմբային պար», «Հայկական տառարվեստը և իր մշակութային դրոշմները, Սուրբ Թադևոս վանքի ուխտագնացությունը»: Իսկ Ադրբեյջանը, այս ոլորտում ևս պատերազմելով և յուրացնելով ՀՀ ոչ նյութական ժառանգությունը, ՅՈՒՆԵՍԿՕ-ին է ներկայացրել հիմնականում հայկական արժեքներ՝ «Յայլի քոչարի պարը՝ որպես Նախիջևանի բնիկ ադրբեյջանցիների պար», «Տոլմայի պատրաստումն ու ավանդույթները՝ որպես ադրբեյջանական ինքնության կերտող», «Քամանչա լարային երաժշտական գործիք ստեղծելու և նվագելու արվեստը Ադրբեյջանում», «Հարթ հաց թխելու մշակույթը Ադրբեյջանում. լավաշ, կատիրմա, յուֆկա», «Չոքավան. դարաբաղյան ձիավարման խաղը» և այլն, <https://ich.unesco.org/en/state/azerbaijan-AZ?info=elements-on-the-lists>, (մուտք 01.02.2021): Այս ցանկը վկայում է այն մասին, որ հայկական ոչ նյութական արժեքների դեմ ադրբեյջանական պայքարը որպես հայ ինքնության խաթարման փորձ, մշտական բնույթ է կրել:

31 Տե՛ս **Johannot-Gradis Ch.**, նշվ. աշխ., էջ 1253-1275:

32 Տե՛ս Ժնևի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիայի առաջին արձանագրություն, հոդված 15:

33 Տե՛ս Ժնևի 1977թ. կոնվենցիայի երկրորդ արձանագրություն, հոդված 9:

ներ՝ պետք է օգտվեին լրացուցիչ պաշտպանությունից: Ուստի կան հիմքեր Ադրբեյջանին պատասխանատվության ենթարկելու ոչ միայն նյութական ժառանգության ապօրինի թիրախավորմամբ, այլև նրա կողմերի հատուկ պաշտպանությունը հաշվի չառնելով միջազգային հանցագործություն անելու մեղադրանքով: Մասնագետների կարծիքով՝ այս կանոնակարգերը չեն ապահովում անհրաժեշտ իրավական բազա մշակութային ժառանգության բոլոր ներկայացուցիչների համար, որոնք են՝ երաժիշտներ, պարողներ, գրողներ, նկարիչներ, տիկնիկագործներ, բանաստեղծներ և նրանց գործառույթները (չնայած որպես քաղաքացիական անձինք՝ նրանք պաշտպանված են)<sup>34</sup> և այլն: Եվ այս համատեքստում շատ մասնագետներ պնդում են, որ «զինված բախումների օրենքը ոչ նյութական ժառանգության պաշտպանության համար բավարար չէ, ուստի պաշտպանության լրացուցիչ աղբյուրների համար հարկ կլինի դիմել ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության» կոնվենցիայի դրույթներին՝ մարդու իրավունքների այլ նորմերի համադրությամբ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. կոնվենցիայի «Գործառնական ուղեցույց»-ում շատ քիչ բան է ասված զինված բախումների ընթացքում ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին<sup>35</sup>: Վերջինս սահմանափակվում է միայն ֆինանսական աջակցությամբ, երբ ոչ նյութական ժառանգությունը կամ համայնքները գտնվում են արտակարգ իրավիճակում<sup>36</sup>: Այնուամենայնիվ, 1972 թ. «Համաշխարհային մշակույթի և բնության ժառանգության պահպանման» կոնվենցիայի կիրառումը զինված բախումների ժամանակ չի դադարեցվում, որի համաբանությամբ կարելի է կարծել, որ ոչ նյութական ժառանգության կոնվենցիան բախումների ժամանակ նույնպես կիրառելի է: Բացի դրանից՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թ. միջկառավարական հանդիպմանը շեշտվել է, որ պետք է հարգվի ոչ նյութական մշակութային ժառանգության կենդանի բնույթը, իսկ պահպանման և փոխանցման շարունակականությունը պետք է ապահովվի ցանկացած պահի, նույնիսկ զինված բախումների ընթացքում<sup>37</sup>:

Բայց, ի տարբերություն նյութականի, ոչ նյութականի պաշտպանությունը պետք է փնտրել տվյալ պետության ներսում, քանզի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության» կոնվենցիայի 11-րդ հոդվածը մասնակից պետություններին է պարտադրում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ իրենց տարածքում առկա ոչ նյութական մշակութա-

34 Տե՛ս **Chainoglou K.**, The Protection of Intangible Cultural Heritage in Armed Conflict.... էջ 109-134:

35 Տե՛ս UNESCO Operational Directives for the Implementation of the Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, 2016 version, [https://ich.unesco.org/doc/src/ICH-Operational\\_Directives-6\\_GA-PDF-EN.pdf](https://ich.unesco.org/doc/src/ICH-Operational_Directives-6_GA-PDF-EN.pdf), ի տարբերություն 1972 թ. կոնվենցիայի գործառնական ուղեցույցի, Operational Guidelines 98, 109, 179/180, [http://whc.unesco.org/en/guidelines/Article\\_11\(4\)\\_of\\_the\\_1972\\_Convention](http://whc.unesco.org/en/guidelines/Article_11(4)_of_the_1972_Convention).

36 Տե՛ս UNESCO Operational Directives..., I.14, para. 50.

37 Տե՛ս UNESCO Intergovernmental Committee for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Decision 10.COM 15.A, 15 October 2015, Annex, Principle 9, [https://ich.unesco.org/en/decisions/10\\_COM15.A](https://ich.unesco.org/en/decisions/10_COM15.A).



յին ժառանգության պահպանումն ապահովելու համար նաև զինված բախումների ժամանակ<sup>38</sup>: Ավելին, փաստը, որ ոչ նյութական մշակութային ժառանգության հիմքում դրված են մարդու ինչպես անհատական, այնպես էլ հավաքական-համայնքային իրավունքները, և որ 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության» կոնվենցիան էլ ստեղծվել է մարդու իրավունքների մասին օրենսդրության շրջանակներում<sup>39</sup>, հանգեցնում է այն ենթադրության, որ մարդու իրավունքներին վերաբերող օրենսդրական պարտավորությունների մեջ է մտնում նաև ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունը զինված բախումների ընթացքում<sup>40</sup>: Հետևաբար, հակամարտության ընթացքում ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության համար տարբեր իրավական նորմերի միջև առկա է աստիճանական փոխկապակցման հնարավորություն, որը պետք է իրականանա մշակութային ժառանգության նկատմամբ մարդու անվիճելի իրավունքների ճանաչման համատեքստում:

## 2. Պատերազմի ժամանակ ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունն Արցախում մարդու իրավունքների տեսանկյունից

Մեր ունեցած փաստերի հիման վրա կարող ենք հավաստել, որ ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունը լիարժեքորեն չիրականացրին ո՛չ ոլորտի հիմնական օրենքները, ո՛չ էլ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաները: Ուստի պատերազմի ընթացքում և դրանից հետո Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունը պետք է բխեցնել մարդու իրավունքների նորմերից, ինչի համար թերևս անհրաժեշտ է հասկանալ մշակութային ժառանգության և մշակութային իրավունքի կապը:

Գոյություն ունի ընկալում, համաձայն որի մշակույթը, մշակութային ժառանգությունն ու իրավունքները սերտորեն կապված են միմյանց: Փոխկապվածությունը վերաբերում է ոչ միայն մշակութային ժառանգության պաշտպանությանը, այլև մշակութային իրավունքներից առավել ընդհանուր կերպով օգտվելուն, որը տալիս է ազատ արտահայտվելու, լեզվի և սովորույթների փոխանցման և ի վերջո համայնքի՝ մշակութային կյանքին մասնակցե-

38 Տե՛ս UNESCO Intergovernmental Committee . . . , Decision 10.COM 15.A, Annex, Principle 5.

39 Տե՛ս ICJ, Advisory Opinion on the Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory, 9 July 2004, para. 105; and ICJ, Case Concerning Armed Activities in the Territory of the Congo (Congo v. Uganda), 19 December 2005, Judgment, para. 216:

40 Տե՛ս United Nations Committee on Economic, Social and Cultural Rights, General Comment No. 21, Right of Everyone to Take Part in Cultural Life (art. 15, para. 1a of the Covenant on Economic, Social and Cultural Rights), 21 December 2009, E/C.12/GC/21, para. 55:

լու հնարավորություն: Իսկ ոչ նյութականն էլ պետք է պաշտպանված լինի իր իսկ իրավունքով՝ որպես մարդու իրավունքների անքակտելի բաղկացուցիչ<sup>41</sup>: Այսպիսով՝ նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության հասանելիության, հաղորդակցվելու և մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը մարդու իրավունքների միջազգային օրենսդրության մաս է<sup>42</sup>: Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ մարդու իրավունքների և մշակութային ժառանգության պահպանության գործիքների միջև գոյություն ունի անքակտելի կապ: Դա հաստատվել է նաև ՅՈՒՆԵՍԿՕ<sup>43</sup>-ի և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից<sup>44</sup>:

Արցախի ժողովրդի մշակութային կենսագործունեությունը խաթարված էր պատերազմի ողջ ընթացքում՝ 44 օր, և դրանից հետո, հետևաբար նաև խախտված էին մշակութային իրավունքները, որոնք, ըստ Վ. Վադիի, համարվում են հիմնարար իրավունքներ<sup>45</sup>: Մշակութային կենսագործունեության իրավունքը սահմանված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» հռչակագրի 27-րդ հոդվածում, որով ամեն ոք իրավունք ունի ազատորեն մասնակցելու համայնքի մշակութային կյանքին, վայելելու արվեստը և օգտվելու գիտական առաջընթացից ու դրա ստեղծած առավելություններից: 2007 թ. «Մշակութային իրավունքների Ֆրիբուրգի հռչակագիրը» ևս սահմանում է նման իրավասություն՝ մշակութային իրավունքները համարելով ինքնության արտահայտման, տարբեր մշակութային ռեսուրսներից, գիտելիքից օգտվելու հնարավորություն: Բացի դրանցից՝ Ֆարոյի 2005 թ. «Մշակութային ժառանգությունը հասարակության համար» կոնվենցիան ևս պարունակում է դրույթներ մշակութային ժառանգության իրավունքի հետ կապված՝ վերջինս ներկայացնելով որպես ժառանգությանը փոխկապակցման հնարավորություն, ինչն էլ կօգնի հարստացնել տվյալ ժառանգությունը՝ դրան նաև սեփական փորձառության ավելացմամբ:

Սակայն նշենք, որ միայն իրավունքների հռչակումը բավարար չէ դրանք կիրառելու համար. նախևառաջ անհրաժեշտ է ստեղծել այդ իրավունքներն իրացնելու հնարավորություն, որը «ժառանգության տարածք», այս դեպքում Արցախ մուտքի, ապա նաև «կառուցման» գործընթացներում<sup>46</sup> ներառվելու իրավունք և հնարավորություն ունենալն է, ինչն այս պատերազմում գրեթե

41 Այս փոխկախվածությունն ամրապնդվում է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի նորմատիվային այլ տեքստերում (J. Blake, Developing a New Standard-Setting Instrument for Safeguarding Intangible Cultural Heritage – Elements for Consideration, UNESCO, Paris 2001, էջ 88-93:

42 Տե՛ս UN General Assembly, Report of the Independent Expert in the Field of Cultural Rights, Farida Shaheed, 21 March 2011, A/HRC/17/38, para. 58-76.

43 Տե՛ս Blake J., “Development of 2003 UNESCO’s Convention: Creating a New Heritage Protection Paradigm?”, in: M.L. Stefano, P. Davis, The Routledge Companion to Intangible Cultural Heritage, London, Routledge, 2017, էջ 11-21:

44 Տե՛ս United Nations Human Rights Council Resolution No. 33, 2016, 27 September, A/HRC/33/L.21:

45 Տե՛ս Vadi V., Cultural Heritage in International Investment Law and Arbitration, Cambridge, Cambridge University Press, 2014, էջ 39:

46 Տե՛ս Տիգրանյան Ա., Մշակութային ժառանգության նոր հայեցակարգը, ժառանգության իրավունքի միջազգային սկզբունքները և ՀՀ օրենսդրական դաշտը, «Տարածաշրջան և աշխարհ», Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների հանրային ինստիտուտ, Եր., 2020, N 4, էջ 84-103:

անհնար էր և է: Մշակութային իրավունքի բրիտանացի տեսաբան Կ. Հաուզ-լորը նշում է, որ այսպիսի դեպքերում խախտվում են մշակութային ինքնության, սեփական լեզուն օգտագործելու, դրանով կրթվելու, սեփական սովորույթներին և ավանդույթներին համապատասխան զարգանալու հնարավորությունները<sup>47</sup>:

Այսպիսով՝ պատերազմը խաթարեց արցախցու՝ իր մշակութային ինքնությանը համապատասխան ապրելու իրավունքը: Փաստորեն, Ադրբեջանը, ոտնահարելով Արցախի մշակութային ժառանգության պաշտպանությունը, խախտեց նաև արցախահայության մշակութային իրավունքները, քանզի նա զրկվեց իրացման անհրաժեշտ գործոնից, այսինքն՝ ժառանգությունը կրող մարդուց կամ համայնքից: Տեղահանված համայնքներն այլևս հնարավորություն չունեն մուտք գործելու իրենց «ժառանգության տարածք», զրկված են այն մեկնաբանելու, նրանում ներառվելու և այն «կառուցելու» հնարավորությունից<sup>48</sup>:

### 3. Պատերազմի ժամանակ մշակութային ժառանգություն կրող անհատների/համայնքների պաշտպանությունն Արցախում

Ինչպես վերը նշվեց, ոչ նյութական ժառանգության պաշտպանությունը պատերազմների ժամանակ, բացի ոչ նյութական արժեքներից, ներառում է նաև այն անհատների, խմբերի կամ համայնքների ֆիզիկական և մտավոր ամբողջականության պաշտպանությունը, որոնք մասնակցում են իրենց իսկ ժառանգության իրացմանը<sup>49</sup>: Այդ պաշտպանությունը ներառում է և՛ անհատական, և՛ համայնքային իրավունքներ<sup>50</sup>: Բայց եթե դիտարկենք բուն պատերազմի ընթացքում ոչ նյութական մշակութային ժառանգություն կրող անհատներին/համայնքներին, այսինքն՝ խաղաղ բնակչությանը հասցված վնասը, ապա կտեսնենք, որ Ադրբեջանի կողմից թիրախավորվել են քաղաքացիական անձինք, տեղահանվել ամբողջական համայնքներ. ի՞նչ է սա, եթե ոչ հարձակում նաև նրանց կրած արժեքների վրա: Համայնքների, այսինքն՝ խաղաղ բնակչության վրա բազմաթիվ հարձակումներով ոտնահարվել են նրանց կյանքի հիմնարար, հատկապես՝ մշակութային իրավունքները<sup>51</sup>: Նմանատիպ դեպքերում միջազգային մարդասիրական իրավունքն է, որ կարող է պաշտ-

47 St u Hausler K., The Protection of Cultural Heritage in Armed Conflict, in Casey-Maslen, S. (ed.), The War Report, Oxford University Press, 2014, file:///C:/Users/User/Downloads/SAACLR-2(2015)-6.pdf, (մուտք 01.02.2021):

48 St u Strategy for Reinforcing UNESCO's Action for the Protection of Culture and the Promotion of Cultural Pluralism in the Event of Armed Conflict, [https://en.unesco.org/system/files/unesco\\_clt\\_strategy\\_en.pdf](https://en.unesco.org/system/files/unesco_clt_strategy_en.pdf), (մուտք 01.02.2021):

49 St u հոդված 33-37 of the Geneva Convention (III) Relative to the Treatment of Prisoners of War, 12 August 1949, 75 UNTS 135. On internees' religious practices rights see Article 93 GC IV; Article 5(1) APII.

50 St u Vrdoljak A. F., Cultural Heritage in Human Rights...., էջ 259:

51 Հատկապես խաղաղ բնակչությանը չթիրախավորելու նորմը ունի սովորութային իրավունքի (jus cogens) բնույթ և, անկախ բոլոր իրավիճակներից, պետք է պաշտպանվի, հոդված 53 of the Vienna Convention on the Law of Treaties, U. N. Doc. A/CONF.39/27 (1969), repinted in 63 Am. J. Int'l L. 875, 1969:

պանել անհատների կյանքը և հետևաբար նաև նրանց ստեղծագործ մտքի արտահայտությունը՝ մշակութային ժառանգությունը<sup>52</sup>: Եվ չնայած այն փաստին, որ մշակութային իրավունքի հանդեպ հարգանքը նաև պարտավորություն է՝ ըստ միջազգային իրավունքի նորմերի<sup>53</sup>, որ Արդարադատության միջազգային դատարանն ընդունել է՝ մարդու հումանիտար իրավունքները կիրառելի են որպես *lex specialis*<sup>54</sup> և ունեն միջազգային սովորութային իրավունքի կարգավիճակ<sup>55</sup> (առկա է հիմնավորում, որ ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունը նույնպես կարող է համարվել այդպիսին)<sup>56</sup>, իրականությունն այն է, որ Ադրբեջանը չի հարգում ինչպես ժառանգության, այնպես էլ այն կրող մարդկանց պաշտպանության իրավունքը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հատուկ գեկուցող Կարինա Բեննոունին նշում է. «Ժառանգության դեմ հարձակումները նախևառաջ հարձակումներ են մարդկանց և նրանց իրավունքների դեմ»<sup>57</sup>: Այս իմաստով Արցախի մշակութային ժառանգության հանդեպ թշնամական պահվածքը պարզապես ժառանգությանն ուղղված հարձակում չէ, այլ ինքնության, անհատական և խմբային իրավունքների մերժման դրսևորում: Իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախկին գլխավոր տնօրեն Իրինա Բոկովան պնդում է, որ «կարիք չկա ընտրություն կատարել կյանքեր փրկելու և մշակութային ժառանգությունը պահպանելու միջև. դրանք [միմյանցից] անբաժան են»<sup>58</sup>: Նա նաև պնդում է, որ ժառանգության ոչնչացում նշանակում է «երկրորդ անգամ սպանել ժողովրդին»<sup>59</sup>:

1790 թ. իռլանդացի քաղաքական տեսաբան Էդմունդ Բրքքն իր «Հեղափոխության ազդեցությունը Ֆրանսիայում» աշխատության մեջ պետությունը համարել է ապրողների, մահացածների և դեռ չծնվածների միջև գործընկերություն, որի ամենակարևոր դրսևորումը անցյալից եկած, ներկայում ապրող և ապա սերունդներին վստահվող մշակութային միջավայրն է<sup>60</sup>: Այս տեսանկյունից, փաստորեն, մշակութային ժառանգության անկապտելի իրավունք ունեն նաև նրանք, ովքեր դեռ չեն ծնվել, հետևաբար պատերազմների ընթացքում, երբ անտեսվում է մշակութային ժառանգության պահպանության հիմնահարցը, դեռ չծնված քաղաքացիները զրկ-

52 Տե՛ս **Toman J.**, *The Protection of Cultural Property in the Event of Armed Conflict*, 1996, Aldershot/Paris, Dartmouth/UNESCO.

53 Տե՛ս **Stone P. G.**, *The Challenge of Protecting Heritage in Times of Armed Conflict*, *Museum International* 67, 2016, էջ 40-54:

54 Տե՛ս United Nations Human Rights Office of the High Commissioner, *International Legal Protection of Human Rights in Armed Conflict*, New York-Geneva, 2011, էջ 11:

55 Տե՛ս **Henckaerts Jean-M., Doswald-Beck L.**, (eds), *Customary International Humanitarian Law*, Vol. 1: Rules, Cambridge, Cambridge University Press, 2005 (ICRC Customary Law Study), in particular Rules 38, 39, էջ 127-132:

56 Տե՛ս **Lostal M.**, *International Cultural Heritage Law in Armed Conflict*, Cambridge, Cambridge University Press, 2017, էջ 103:

57 Տե՛ս **Larsen P. B.**, *Modern Conflict, Emergencies and Cultural Heritage: Exploring the Relevance of Cultural Rights* International Conference on the 20th Anniversary of the 1999 Second Protocol of the 1954 Hague Convention Protecting Cultural Property Conference Proceedings, UNESCO, Paris, 2020, էջ 89-90:

58 Տե՛ս **Bokova Ir.**, *Culture on the Front Line of New Wars*, էջ 294:

59 "UNESCO Reports on Extensive Damage in First Emergency Assessment Mission to Aleppo," UNESCO, January 19, 2017, <http://whc.unesco.org/en/news/1619/>.

60 Տե՛ս **Edmund B.**, *Reflections On the Revolution in France: And on the Proceedings in Certain Societies in London Relative to That Event. In a Letter Intended to Have Been Sent to a Gentleman in Paris. By the Right Honourable Edmund Burke. The seventh edition. printed for J. Dodsley, London, 1790, էջ 226:*

վում են ժառանգությանը հաղորդակցվելու իրենց իրավունքից: Վերոնշյալ դիտարկումների համատեքստում կարող ենք արձանագրել, որ Ադրբեջանի ազդեցիկ գործողությունների հետևանքով խախտվեցին ոչ միայն այդ մշակույթն արդեն կրող քաղաքացիների իրավունքները, այլև գալիք սերունդների, որոնք պետք է ունենային իրենց ծագմանը ներհատուկ մշակութային ինքնությանը լիարժեքորեն ապրելու իրավունք:

#### 4. Ոչ նյութական մշակութային ժառանգության ոչնչացումը 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը տևած պատերազմում

Կախված զինված հակամարտության փուլերից՝ ոչ նյութական ժառանգությունը կարող է կրել տարբեր վնասներ: Պատերազմական գործողությունները կարող են փոխակերպական (տրանսֆորմացիոն) ազդեցություն ունենալ համայնքների վրա՝ կասեցնելով նրանց մշակութային գործունեությունը, քանդելով նրանց (խմբի, համայնքի կամ ազգի ներկայացուցչի) գոյության մշակութային հիմքերը<sup>61</sup>: Իսկ համայնքների բռնի տարահանումն ու ինքնության տարրերի հեռացումը կարող են անցյալի սոցիալական հիշողության մթագնման պատճառ դառնալ<sup>62</sup>: Քանի որ երբ համայնքները դադարում են ապրել իրենց ոչ նյութական մշակութային ժառանգությամբ կամ եթե որպես ամբողջություն՝ վերանում են, ապա նրանց ժառանգությունը դատապարտված է անհետանալու<sup>63</sup>: Վերջին պատերազմի հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցած ԱՀ մի շարք համայնքների՝ Ասկերանի (8), Հադրութի (28), Մարտակերտի (8), Մարտունու (7), Շահումյանի (14), Շուշիի (3), Քաշաթաղի (50) համայնքների<sup>64</sup> 20 հազարից ավելի բնակիչ բռնի տեղահանման պատճառով տարանջատվել է իր սոցիալ-մշակութային արժեքներից, և այդ համայնքների մշակութային ինքնությունը կանգնած է ոչնչացման եզրին, իսկ նրանց ոչ նյութական մշակութային ժառանգությունը դատապարտված է անհետացման: Օրինակ՝ Ադրբեջանի վերահսկողությանն է անցել Հադրութի շրջանի Տող գյուղը, որտեղ գտնվում են «Կատարո» գինու գործարանը և խաղողի այ-

61 St u Chainoglou K., The Protection of Intangible Cultural Heritage in Armed Conflict..., էջ 109-134:

62 St u Teiggeler R., So Yesterday was the Burning of Books- Wartime in Iraq, Lecture Held at Responsible Stewardship Towards Cultural Heritage Materials, Preconference of the IFLA Rare Book and Manuscript Section, Copenhagen, The Royal Library, 2005, 11 August, IW&A Documents, <http://iwa.univie.ac.at/teiggeler.html> (մուտք՝ 02.02.2021).

63 St u Pier M., Duvelle C. and UNESCO Intangible Cultural Heritage, Best Cultural Destinations-2017, <https://bestculturaldestinations.com/preservation/cecile-duvelle-unesco-intangible-cultural-heritage/> (մուտք՝ 02.02.2021 )

64 Ադրբեջանի հսկողության տակ անցած Արցախի Հանրապետության համայնքների և բնակավայրերի ցանկ, <https://drive.google.com/file/d/1ipkvWkKgiePtBVhrWepUuDqWPBcCQDKS/view?fbclid=IwAR1FH07ZMUr6vj8WGTXEvdY6G7uZrWyo5e4axbA9HGsu8o5qPUwDEIqSik8> (մուտք՝ 01.02.2021):

գին<sup>65</sup>: Գինու հումքը Խնդողնի անվամբ խաղողն էր, իսկ պահպանման համար օգտագործվում էին արցախյան կաղնու փայտից պատրաստված տակառներ: Բացի դրանից՝ նույն Տող գյուղում, որպես գինեգործության օրրան, անցկացվում էին գինու փառատոներ՝ ներկայացնելու համար գինու կարևորությունը Արցախի հասարակական կյանքում: Ուստի պետք է արձանագրենք, որ իսպառ վերացման եզրին են հայտնվել այն փորձն ու գիտելիքը, որոնք բնորոշ էին հենց արցախյան գինեգործական մշակութային լանդշաֆտին, և կյանք էին հաղորդում գինեգործական ոչ նյութական պրակտիկային:

Գերմանացի մարդաբան Բ. Բրաուչլերի անդամաբ՝ պատերազմների ընթացքում նյութականի վնասը շատ դեպքերում ակնհայտ և տեսանելի է, իսկ ոչ նյութականի վնասն ընդհանրապես անհետացման վտանգի առջև է հայտնվում, և հնարավոր չէ այն գնահատել<sup>66</sup>: Այս իմաստով կորուստն ավելի մեծ է՝ ինքնութենական է, քանզի նաև շարունակականության անհնարինության վտանգ կա, որը չէր լինի, եթե համայնքը շարունակեր իր բնականոն կենսագործունեությունը:

Մեկ այլ օրինակ է Հադրութի Դրախտիկ գյուղում անցկացվող թթվի փառատոնը<sup>67</sup>, որը ներկայացնում էր Հադրութի շրջանի այդ և ևս 16 գյուղերի ավանդական թթվի հարուստ մշակույթը, որն իր ողջ պրակտիկայով անհետացման եզրին է: Այս ոչ նյութական պրակտիկան այլևս չի կարող ունենալ այն նույն մշակութային ենթահողը (տեղական հումք, բնություն, համայնքի գիտելիք), որն ուներ Արցախում, և այս իմաստով հադրութցու համար այլևս հասանելի չէ այն մշակութային տարածքը, որտեղ նա «մուտքի» հնարավորություն ունենալով պետք է ստեղծեր, արարեր ու ապագա սերունդներին փոխանցեր թթվի պատրաստման ոչ նյութական պրակտիկան:

Իսկ Արցախի Մարտունի քաղաքում տեղի էր ունենում նաև փառատոն, որին մասնակցում էին նաև Մարտունու շրջանի մի շարք այլ համայնքների բնակիչներ, որոնք այսօր չունեն այդ հնարավորությունը, քանզի նրանց բնակավայրերը թշնամու վերահսկողության ներքո են<sup>68</sup>: Սա հատկապես կարևոր էր այն իրողության համապատկերում, երբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2020 թ. ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում Ադրբեջանի «Նար Բայրամի. ավանդական նուռն ու մշակույթը» հաստատվեց որպես ադրբեջանական պրակտիկա<sup>69</sup>:

65 Տե՛ս «Կատարո» գինեգործարանի գյուղը անցել է թշնամու տիրապետությանը,

<https://gastrovino.mediamax.am/am/news/drink/40955>, (մուտք 18.11.2020):

66 Տե՛ս Bräuchler B., Intangible Cultural Heritage and Peace Building in Indonesia and East Timor, Routledge, 2012, էջ 153-167:

67 Տե՛ս «Արցախայրես», <https://artsakhpress.am/arm/news/6935/>, (մուտք 01.02.2021):

68 Նաև երրորդ փառատոնն Արցախում, <https://arcakh24.info/hy/nran-errorr-paratony-arcakhum/> (մուտք 28.01.2021):

69 Տե՛ս UNESCO, Nar Bayrami, Traditional Pomegranate Festivity and Culture / <https://ich.unesco.org/en/RL/nar-bayrami-traditional-pomegranate-festivity-and-culture-01511>, (մուտք 28.01.2021):

Բացի դրանից՝ Շուշիում ամեն տարի՝ սեպտեմբերի 2-ին, նշվում էր Արցախի անկախության տոնը, որին մասնակցում էին հյուրեր աշխարհի բազմաթիվ երկրներից: Բայց քանի որ Շուշին թշնամու վերահսկողության տակ է, գրկված է իր տոները իր ուզածով ու պատկերացրածով նշելու հնարավորությունից: Մեկ այլ օրինակ է Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում տեղի ունեցող ժենգյալով հացի փառատոնը<sup>70</sup>, որին մասնակցում էին նաև Մարտակերտի Թալիշ, Հովտաշեն, Նոր Այգեստան և այլ գյուղերի բնակիչները. նրանք այսօր արդեն գրկված են այդ հնարավորությունից:

Այս առումով ամերիկացի հայտնի պատմաբան և մշակութային ժառանգության մասնագետ Դ. Լոուենթալի “The Heritage Crusade and the Spoils of History” աշխատության հիմնական փաստարկն այն է, որ «մշակութային ժառանգությունն արժևորվում է, քանզի ի վիճակի է պատմությունը, ժամանակակից խնդիրները և կարիքները հասկանալու ազդակի վերածելու, և ոչ թե լոկ մշակութային ժառանգության պատմական նշանակությանը կամ կարևորությանն է հանգում: Ուստի ժառանգությունը կենդանի է և ակտիվ, քանզի ներառում է ֆենոմեններ, որոնք պետք է ակտիվորեն զգալ և փորձառություն քաղել»<sup>71</sup>: Եվ այս իմաստով չենք կարող վստահ լինել, որ այն նույն գիտելիքը, որ Արցախի ներկայացուցիչը կարող էր ստանալ իր ժառանգությանն անմիջական շփման շնորհիվ, կստանա այլ տարածքում, և իր ստացածի կարևորությունն ու արժեքը նույնը կլինեն: Բացի դրանից՝ ժենգյալով հացի հունքը, ըստ համայնքի ներկայացուցիչների, 24 տեսակ կանաչի է, որոնք ապահովում էին ուտեստի յուրահատկությունն ու համը, իսկ այսօր տեղահանված բնակիչները ՀՀ մայրաքաղաքում կարող են գտնել դրանցից միայն մի քանիսը, որոնք, իհարկե, չեն կարող «ապահովել» այդ ոչ նյութական պրակտիկայի ավանդական և արդեն հայտնի համը:

Ոչ նյութական մշակութային ժառանգության ընդհատման ցավալի հետևանքներից է նաև, ինչպես վերը այս մասին խոսեցինք, գալիք սերունդներին ժառանգության փոխանցման անհնարիությունը կամ «խոչընդոտումը»: Ինչպես նշում է բրիտանացի մշակութային պատմաբան Ռ. Հայվիզոնը, ժառանգությունը «սերունդների բանալին է»՝ արժեքների շարք, որը ժառանգվել է նախնիներից և պետք է փոխանցվի գալիք սերունդներին<sup>72</sup>: Այս բացատրությունն անխուսափելիորեն աղերսվում է այն դերին, որն ինքը պետք է ստանձնի: Ուստի կարևոր է ժառանգությունը ոչ թե որպես սպառման աղբյուր, այլ սերունդների կողմից վերաիմաստավորման արժանի երևույթ ընկալել: **Ժառանգությունն իմաստավորվում է հենց արժեքների փոխանցման**

70 Տե՛ս «Հաթերքում կազմակերպվել է ժենգյալով հացի երրորդ փառատոնը»  
/https://artsakhpress.am/arm/news/106502/ (մուտք՝ 28.01.2021):

71 Lowenthal, D., The Heritage Crusade and the Spoils of History, Cambridge, Cambridge University Press, 1998, էջ 119, 122:

72 Տե՛ս Hewison R., Heritage: An Interpretation. In: D. Uzzell (ed.),” Heritage Interpretation 1, London, Belhaven Press, 198, էջ 15-23:

**Ժամանակ, և միայն սերունդները կարող են հայտնաբերել ժառանգության ողջ ներուժը:** Բայց արցախյան պատերազմի ընթացքում խաթարվեց ոչ նյութական ժառանգության փոխանցման գործընթացը, ուստի ժառանգությունն էլ կորցրեց իր հիմնական արժեքը: Արցախի այն բնակավայրերը, որոնք մնացին թշնամու վերահսկողության տակ, իսկ բնակիչները տարհանվեցին, կորցրեցին ոչ միայն իրենց անցյալի ժառանգությունը, այլև ապագան, որը պետք է հիմնվեր անցյալի փորձառության վրա: Վերոնշյալ փաստարկների համատեքստում կարող ենք պնդել, որ Արցախի մշակութային ժառանգության կորուստը հարցականի տակ է դնում առաջին հերթին արցախահայության մշակութային ինքնության ապագան և հետևաբար նաև համայնքի մշակութային կենսագործունեության հնարավորությունները:

Այսպիսով՝ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությունը խիստ կարևոր է հատկապես պատերազմների ընթացքում: Բայց անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ ժառանգության պահպանությունը սուկ ֆիզիկական ջանք չէ, այլ հոգեմտավոր գործունեություն, որը պիտի հաշվի առնի նաև ապագա սերունդներին: Այս համատեքստում ժառանգության տեսաբան Զ. Տանբրիջը և ժառանգության կառավարման նիդեռլանդացի տեսաբան Գ. Աշուորթը ժառանգության պահպանությունը նույնացնում են «ժառանգության արտադրությանը» և նշում, որ պահպանման նպատակային գործընթացում «անցյալի իրադարձությունները և արտեֆակտերը վերածնվում են արտադրանքի ժառանգության տեսքով՝ նախատեսված ժամանակակից կարիքների բավարարման համար, և պահպանելով՝ մենք ստեղծում կամ վերարտադրում ենք»<sup>73</sup>:

Պահպանման մեխանիզմները, ըստ բազում հեղինակների, տարբեր են, բայց թերևս առանձնացնենք երկուսը՝ շարունակականություն և էթնիկ հիշողություն<sup>74</sup>: Որոշ հեղինակներ պնդում են, որ ժառանգությունը նույն ինքը հիշողությունն է<sup>75</sup>, որի դեպքում ոչ նյութականը կրկին ամենախոցելին է<sup>76</sup>: Իսկ շարունակականությունը՝ որպես մշակույթի հիմնական գործառնության բաղադրիչ և դրա պահպանման համար պատասխանատու երևույթ, գիտելիքների և կողավորված տեղեկության փոխանցման հիմքն է<sup>77</sup>: **Արցախի դեպքում հիշողության պահպանման խաթարման և շարունակականության կորստյան վտանգ կա, քանզի նույն համայնքի ներկայացուցիչները կապված են ոչ միայն արյունով, այլ նաև գիտելիքով ու փորձառու-**

73 Tunbridge J. E. & Ashworth G. J. Dissonant Heritage. The Management of the Past as a Resource in Conflict, Chichester, John Wiley & Sons, 1996, էջ 6-7:

74 ՏԵՍ Խազբուլատով Ա. Ր., Նուրբեյի Մ., The Preservation of Cultural Heritage: Continuity and Memory, World Academy of Science, Engineering and Technology International Journal of Humanities and Social Sciences, Vol. 6, 2012, N 6, էջ 1028.

75 ՏԵՍ Խազբուլատով Ա. Ր., Sohranenie nacional'nyh kul'tur v processe globalizacii, Kul'turnoe nasledie Kazahstana: otkrytiya, problemy, perspektivy. Mat. Mezhd. nauch. konf., Almaty, 2005, էջ 331-338.

76 ՏԵՍ Խազբուլատով Ա. Ր., Prostranstvo i vremja kak kul'turologicheskie kategorii, Izbrannye trudy v VII tomah, Tom III, Trudy po problemam kul'tury. – Spb. Petropolis, 2007, էջ 33-45.

77 ՏԵՍ Խազբուլատով Ա. Ր., Mirovaja hudozhestvennaja kul'tura" Ucheb. posob. M., Vysshaja Shkola, 2001, էջ 767.



**թյամբ, իրենց նախնիների և սերունդների հանդեպ պատասխանատվությամբ:** Գերմանացի մասնագետ Յան Ամանը պնդում է, որ հենց մշակութային հիշողությամբ է համայնքը ձեռք բերում ապրելու հնարավորություն<sup>78</sup>: Կենդանի մշակութային ժառանգությունն արտահայտվում է մարդկանց միջոցով, և միայն տվյալ գիտելիքը կրող անհատների կամ համայնքների շնորհիվ է ապահովվում փոխանցման գործընթացը: Հետևաբար ռազմական բախումների ընթացքում խոչընդոտելով արցախցիների ազատ տեղաշարժման, ժառանգության հասանելիության, այն ստեղծելու, ցուցադրելու և այլ իրավունքներ՝ Ադրբեյջանը խաթարեց ոչ նյութական պրակտիկայի փոխանցման, պահպանման և հիշողության գործընթացը:

Ոչ նյութական մշակութային ժառանգությանը հասցվող վնասը կարող է լինել նաև նյութականի վնասվելու հետևանքով: 2020 թ. աշնանը Ադրբեյջանի հրահրած պատերազմի ընթացքում Շուշիի Սուրբ Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցու՝ պատերազմական բոլոր կանոններին հակասող ուժեղացումը վնասի միայն արտաքին կողմն էր: Իզուր չէ որ ավստրալացի հայտնի տեսաբան Լ. Սմիթը իր «Ժառանգության օգտագործում» աշխատանքում նշում է՝ «իրականում միայն նյութական չէ ժառանգությունը»<sup>79</sup>: Իսկ զինված բախումներում մշակութային ժառանգության պաշտպանության հարցերով զբաղվող շվեյցարացի տեսաբան Յ. Գրադիսն ավելացնում է, որ ոչ նյութական ժառանգությունն է, որ կյանք է հաղորդում նյութականին և ապահովում համայնքի գիտելիքների և մշակութային ինքնության բաղադրիչների փոխանցումը, և հակամարտության ընթացքում վնասված հուշարձանի նյութական կորստից զատ՝ տուժում է նաև վերջինիս հետ որոշակի ծեսերի ու ավանդույթների ընդհանրություն ունեցող ամբողջական համայնքը<sup>80</sup>: Թեև եկեղեցու թիրախավորումն ակնառու էր, իսկ ոչ նյութական մշակութային ժառանգությանը հասցված վնասը սակավ տեսանելի, սակայն վերջինս պակաս կարևոր չէր:

ՄԱԿ-ի մշակութային իրավունքի ոլորտում հատուկ զեկուցող Կարինա Բենուի խոսքով՝ «Մշակութային ժառանգության յուրաքանչյուր կատեգորիաներառում է մյուսի ինչ-որ մաս, և այս երկու կատեգորիաներից որևէ մեկի կորուստը զինված բախումների ընթացքում հանգեցնում է համայնքների ինքնության քայքայմանը»<sup>81</sup>: Շուշիի համայնքը և եկեղեցականներն այլևս չեն կարող անվտանգ իրականացնել իրենց ծեսերն ու հաղորդակցումը. փաստորեն համայնքը զրկվել է այդ իրավունքից, որը խոր հետք կթողնի ինքնության վրա՝ տանելով ընդհուպ նրա քայքայմանը:

78 St' u Assman J., Kul'turnaja pamjat. Pis'mo, pamjat' o proshlom i politicheskaja identichnost' v vysokih kul'turah drevnosti, M., Jazyki slavjanskoj kul'tury, 2004, էջ 90:

79 Smith L., Uses of Heritag, London., Routledge, 2006, էջ 1:

80 St' u Johannot-Gradis Ch., Protecting the Past... էջ 1256:

81 United Nations General Assembly, Report of the Special Rapporteur..., A/HRC/31/59, para. 48, 77.

## Եզրակացություններ

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ընթացքում և դրանից հետո Արցախի համայնքների բռնի տեղահանման, խաղաղ բնակչության թիրախավորման գործողությունները, լինելով էթնոմշակութային գտման քաղաքականություն, ուղղված են առաջին հերթին արցախահայության ինքնության ոչնչացմանը: Վերջին պատերազմն աչքի ընկավ ոչ միայն Արցախի նյութական ժառանգության ակնհայտ թիրախավորմամբ, այլև ոչ նյութական մշակութային ժառանգության (որոնցից են՝ ծեսերը, սովորույթները, սոցիալական պրակտիկան, գիտելիքներն ու հմտությունները, պատկերացումները, արհեստները, կենցաղը, առօրյա գործունեությունը և այլն) կրած հսկայական վնասներով: Նյութական ժառանգության վնասը խոշոր հաշվով ակնհայտ և տեսանելի է, մինչդեռ ոչ նյութական ժառանգությունն անհետացման վտանգի առջև է, իսկ կորուստն ամբողջությամբ գնահատել հնարավոր չէ: Բայց հարկ է շեշտել, որ բախումների ժամանակ ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունը շատ կարևոր է, քանզի հենց դա է համայնքներին ապահովում ինքնության և շարունակականության զգացումով, և դրա ոչնչացումը նույնիսկ կարող է սպառնալ համայնքի գոյությանը: Եվ ինչպես պարզվեց, պատերազմի ընթացքում մշակութային ժառանգության ամենախոցելի թիրախը հենց ոչ նյութական ժառանգությունն է, որը վնասվում է թե՛ այն ժամանակ, երբ խաղաղ բնակչությունն է թիրախավորվում (քանզի ոչ նյութական ժառանգությունն արտահայտվում է այն կրողների միջոցով), թե՛ այն ժամանակ, երբ համայնքները տեղահանվում են և թե՛ այն ժամանակ, երբ նյութական ժառանգությունն է վնասվում: Ուստի ոչ նյութական ժառանգության պաշտպանությունը բախումների ժամանակ կարևոր է դառնում ոչ միայն ժառանգության արժեքների, այլև այն համայնքների և խմբերի մշակութային ինքնության պահպանության առումով, որոնք այն կիրառում են: Ու չնայած այս ամենին՝ վնասի, կորստի ու դրանց հետևանքների դեմ ուղղված՝ ոլորտի հիմնական օրենքները՝ Հաագայի 1954 թ. «Զինված հակամարտության ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության» կոնվենցիան և լրացուցիչ արձանագրությունները (1954 թ. և 1999 թ.) միայն մասամբ են բավարարում ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության պահանջը՝ ապահովելով պաշտպանություն միայն նյութական ժառանգության հետ ենթադրվելիք միասնության տեսանկյունից: Իսկ Ժնևի 1949 թ. «Պատերազմի զոհերի և քաղաքացիական անձանց» պաշտպանության մասին կոնվենցիայի և դրա լրացուցիչ արձանագրությունների տարբեր նորմեր խաղաղ բնակիչներին, այսինքն՝ ոչ նյութական մշակութային ժառանգության կրողներին, պաշտպանություն են տրամադրում լոկ քաղաքացիական ան-

ձանց պաշտպանության տիրություն: Հետևաբար այդ նորմերը չեն կարող վտանգի գոտում գտնվող ոչ նյութական մշակութային ժառանգությանը լավագույն պաշտպանություն ապահովել: Ու թեև ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության» կոնվենցիան մարդու իրավունքների համատեքստում, ոչ նյութական մշակութային ժառանգությունը վերաձևակերպելով որպես համայնքի անդամների մշակութային իրավունք, սահմանել է նաև պաշտպանության իրավունք, բայց Ադրբեջանը, ոտնահարելով պատերազմի սովորության և միջազգայնորեն սահմանված բոլոր նորմերը, շարունակում է Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման իր քաղաքականությունը: Պատերազմի ընթացքում և դրանից հետո Ադրբեջանի՝ Արցախի բնակչության իրավունքների ոտնահարման հետևանքով արցախահայության մի մասը գրկված է իր ոչ նյութական պրակտիկան կիրառելու և այն սերունդներին փոխանցելու հնարավորությունից, որը կարող է խաթարել նրանց ինքնությունը և վտանգել համայնքի մշակութային ինքնության գոյությունը:

**Արմինե Հ. Տիգրանյան** – զբաղվում է մշակութային ժառանգության պահպանության, կառավարման և հանրահռչակման խնդիրներով: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են պատերազմի ժամանակ ժառանգության պահպանության մշակութային իրավունքի սկզբունքները, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության պետական և ոչ պետական մեխանիզմները, ժառանգության քաղաքացիական և համայնքային պահպանության, ինքնության և մշակութային ժառանգության հարցերը:

Summary

## THE MECHANISMS FOR PROTECTION OF INTANGIBLE CULTURAL HERITAGE OF THE ARMENIANS OF ARTSAKH

In the modern international legal system

Armine H. Tigranyan

**Key words** – intangible cultural heritage, ethnic/cultural cleansing, cultural rights, the culture during wartime, Azerbaijani aggression, destruction of Armenian identity, international humanitarian law, the customary international rules of the war.

This article introduces the urgent need for legal protection of Artsakh's intangible cultural heritage during the war. It highlights that the international conventions and other legal systems protecting the cultural heritage during armed conflicts perform

their function only partially and not in a direct way. This article identifies the crossroads where the intangible heritage is transformed to the cultural right of community members and finds its protection in the international human rights system.

The second Artsakh war provoked by Azerbaijan, qualified as an ethnic/cultural cleansing, was primarily aimed at the destruction of the identity of Armenians of Artsakh. It was characterized not only by the obvious targeting of material heritage of Artsakh, but also targeted the intangible cultural heritage of the Armenians of Artsakh – the national rituals, customs, knowledge and skills, ideas, crafts, etc.

We should note that if the damage caused to the tangible heritage is obvious in most cases, the intangible heritage is in danger of its overall extinction and it is impossible to assess its damage. The protection of intangible cultural heritage during conflicts is very important, as it provides the communities with a sense of identity and continuity, the destruction of which threatens the existence of the community itself. The most vulnerable target of the cultural heritage during war is the intangible heritage, as it is damaged in both cases whether the target is the civilian population and the communities are displaced (the intangible heritage is revealed through its bearers), or whether the material heritage is damaged. Thus, the protection of intangible heritage during conflicts becomes important not only in terms of preserving the element of heritage itself, but also in terms of preserving the cultural identity of the communities and groups that use it.

During and after the war the cultural rights of many communities in Artsakh were violated by Azerbaijan, many of them were and will be deprived of the opportunity to use and pass on their intangible experience to future generations. This can damage their identity, endanger the continuity and future of the community and since most of the Armenians of Artsakh during and after the war stop acting according to their intangible cultural heritage, this heritage loses its vitality and is doomed to disappear. So the protection becomes even more important in this context.

Despite the caused damage, the loss and the consequences, the international legal system for the protection of cultural property during the Armed Conflicts (the relevant Conventions and Protocols of Hague and Geneva) is still problematic and not perfect in terms of the protection of the intangible heritage and its main norms cannot provide the best protection for the endangered heritage. Therefore, the intangible heritage, being redefined as a cultural right of the community, found its protection in UNESCO Convention on Intangible Cultural Heritage in 2003 and in the Human rights system. And since the application of intangible cultural heritage practices is closely linked to the cultural rights of humans, the legal basis of Human rights became the key point where individuals and communities with intangible cultural heritage receive the necessary legal protection.

## МЕХАНИЗМЫ ЗАЩИТЫ НЕМАТЕРИАЛЬНОГО КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ АРЦАХА

В современной международно-правовой системе

Армине А. Тигранян

**Ключевые слова** - нематериальное культурное наследие, этническая/культурная чистка, культурные права, культура во время войны, азербайджанская агрессия, уничтожение армянской идентичности, обычные законы войны, международное гуманитарное право.

Статья представляет необходимость правовой защиты нематериального культурного наследия Арцаха во время войны, показывает, что он лишь частично и косвенно защищен международными конвенциями и другими правовыми системами защиты культурного наследия во время вооруженного конфликта, и выявляет тот перекресток, которым нематериальное наследие преобразующееся в культурное право членов общины, находит свою правовую основу защиты в международной системе прав человека.

Спровоцированная Азербайджаном вторая арцахская война, квалифицируясь как политика этнических/культурных чисток, была направлена, в первую очередь, на уничтожение идентичности армян Арцаха. Она была охарактеризована не только случаями покушения на материальное наследие Арцаха, но и нанесла огромный ущерб и нематериальному культурному наследию (такие как ритуалы, обычаи, социальные практики, знания и навыки, представления, ремесла, быт, повседневная деятельность и т. д). И если ущерб, нанесенный материальному наследию, во многих случаях был очевиден и заметен, то нематериальное наследие сталкивается с риском исчезновения и невозможно его оценить. Но во время столкновений защита нематериального культурного наследия очень важна, ибо именно это обеспечивает общины чувством идентичности и непрерывности, и его уничтожение угрожает даже существованию общины. Во время войны самой уязвимой целью культурного наследия является именно нематериальное наследие, которому наносится ущерб тогда, когда целью становится мирное население (ибо нематериальное наследие проявляется через его носителей), когда общины перемещаются, и когда разрушается материальное наследие. Поэтому защита нематериального наследия во время столкновений ста-

